№ 19 Փետրվարի 14 (26) 1879 Փետրվարի 14 (26) № 19

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են այսպէս
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է ամեն օր առաւօտեան 10—3 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 3 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ազգային թատրոնը.—Ներքին տեսութիւն. Նամակ Աստրախանից. Նամակ [illegible]. Նամակ [illegible]. Նամակ [illegible].—Արտաքին տեսութիւն. [illegible]—[illegible] հեռագիրներ.—Յայտարարութիւններ.—[illegible]

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ

Ընթերցողին յայտնի է արդէն որ Թիֆլիսում կազմվել է մի հայոց թատրոնական ընկերութիւն, որ նպատակ ունի կազմել մի մշտական հայոց խումբ։ Ասում են որ բաւական մեծ գումար հաւաքված է արդէն, որ պէտք է լինի թատրոնական հիմնական դրամագլուխ։

Բայց չանցաւ մի շաբաթ և մեր քաղաքի վրացի թատրոնասէրներն էլ հաւաքվելով, ժողովեցին իրանց մէջ նոյնպէս մեծ գումար, որքան հարուստ հայերը....

Հայերը դեռ նոր են մտածում խումբ կազմելու վրա, իսկ վրացիները ունեն արդէն մի պատրաստ դերասանական խումբ։

Շատ ուրախալի երեւոյթ է, ի հարկէ, որ վերջապէս կազմվեցաւ հայոց թատրոնական ընկերութիւն, որ հաւաքեցաւ մի յայտնի դրամագլուխ. բայց այդքան անելուց յետոյ, չը պէտք է նստել կորցնել, չը պէտք է թողնել գործը, չը պէտք է ուշանալ....

Հայոց թատրոնական ընկերութիւնը դեռ չէ ընտրել իր միջից մի մշտական մ ա ն ա ժ ե ր ո վ, —բայց դեռ ինչքան գործ ունի նա անելու։

Իսկ մինչև այդ ժամանակը թատրոնական դահլիճը կարող է պատրաստ լինել.... Վրացիները արդէն պատրաստ են, իսկ հայերը, —ոչ։

Առաժամադրելը պէտք է դեկորացիաներ շինել տալ, հագուստներ և կահկարասիք առնել, խումբ գտնել, երաժշտարդներին և արհեստներին հրաւիրել, դերասանների հետ պայման կապել, բեմական գտնել, դերասաններին վարժեցնել, բեմադրութեան կարգի, թարգմանիչների և հեղինակների հետ պայմաններ դրել և այլն, —իսկ, կրկնում ենք, թատրոնը մի ամսից յետոյ պատրաստ կը լինի և դեռ ժամանակը հեռու չէ տալ այդ բոլոր նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներին։

Խումբ կազմելը հեշտ բան չէ, մանաւանդ մեր մէջ, որտեղ դեռ նախապաշարմունքներ են տիրապետում դերասանի և դերասանուհու արժանաւոր վերաբերութեան։ Մեր կրթված երիտասարդներ և կրթված օրիօրդներ ամօթ են համարում դերասանական պաշտօնը ընդունելու, չը նայելով որ դերասանի պաշտօնը աշխարհիս ամենապատիւ պաշտօններից մինն է։ Դերասանը և դերասանուհին բարոյական գաղափարների կենդանի քարոզիչներն են ժողովրդի մէջ։ Նրանց պաշտօնը, այնուհետ կերպով կատարված, նոյնպէս բարձր է, որքան ուսուցչի, կամ խմբագրի պաշտօնը։ Ի՞նչ են անում, արեմն, մեր երիտասարդները և օրիօրդները այդ ասպարէզի վրա մտնելու։

Ուրիշ կողմից հայ դերասանի և դերասանուհու պարագաները, եթէ խումբը խելացի կերպով կառավարված կը լինի, կարող է դրամական կողմից էլ մեր բոլոր ուրիշ ազգային պաշտօններից լաւ վարձատրված լինել։

Մի ժամանակ մեր ամբողջ լրագրութիւնը տիրացուների ձեռքումն էր, —և հայոց լրագրութեան անունը կորցրած էր։ Մի ժամանակ մեր ուսուցիչները տիրացուների ձեռքումն էին, —և մեր ուսուցիչների անունն էլ կորցրած էր։

Թող մեզ ների մեր դերասանները, բայց մենք պէտք է ճշմարտութիւն ասենք։ Մինչև այժմ մեր դերասանական եղած ամբողջութիւնը, ensemble, բաղկացած մի երկու, չորս, ճշմարիտ լաւ ուսուցած, կրթված անձերից, միշտ բաղկացած էր, անտաղանդ, տիրացուներից....

Իսկ մեր դերասանական գործը կը բարձրանայ, իր բարձր կրթութեան նշանակութիւնը կը ստանայ, ինչպէս լրագրութիւնը և ուսուցչութիւնը, միայն այն ժամանակ, երբ հայոց բեմի վրա հանդէս գալու կը գան մեր համալսարանների միջին դասին պատկանող կրթված օրիօրդները և երիտասարդները։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Փետրվարի 1-ին

Վերջին ժամանակ մեր լրագրութեանց լրագիրներում կարդում էինք որ Աստրախանի մէջ [illegible] տարածված է տարափոխիկ հիւանդութիւնը և որ մեռնում են շատ մարդիկ։ Այս տեղեկութիւնների առիթով, [illegible] եմ համարում ընթերցողի ուշադրութեանը ներկայացնել հետևեալ ճիշտ տեղեկութիւնները։

Նախ և առաջ պէտք է ասել, որ նոյն իսկ Աստրախանի մէջ ոչ մի հիւանդութիւն չէ եղել և այժմ էլ չը կայ։ Այս հիւանդութիւնը [illegible] յայտնվեց [illegible] Վ ե տ լ ե ա ն կ ա կոչված [illegible] (Ветлянка, казачая станица, Енотаевскаго уѣзда), որ գտնվում է Աստրախանից 190 վերստ հեռաւորութեամբ և որտեղ կան մինչև 1800 բնակիչ։

Հէնց որ յայտնեցին Վետլեանկայում [illegible] [illegible] Ա. [illegible] [illegible] Վետլեանկա [illegible] 300 վերստ [illegible] 20 [illegible]

[illegible] մինչև այժմ [illegible] 300 [illegible]

Մեր [illegible] 22 [illegible] մ ա ք ր ե լ [illegible] և դ է զ ի ն ֆ է կ ց ի — [illegible]

Օտարականներ մեր [illegible]

[illegible] (купоросъ) և [illegible]

[illegible] 20-ից մինչև [illegible] 12 [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Աշոտ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑ

Փետրվարի 3-ին

[illegible] Ս. Վարդանի [illegible]

[illegible] 3-ին [illegible] Ս. Վարդանի [illegible] Վարդան Մամիկոնեանը [illegible]

[illegible]